# ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

## ՀԱՅՈՑ ԵՒ ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՒՍ ՄԵԿ ԱՆԴՐԱԴԱՐՁ

*Հայոց վաղ շրջանի պատմության անբաժան մասն է մատենագրության մեջ տարբեր անուններով հայտնի Աղվանից աշխարհի կամ Աղվանքի պատմությունը։ Հայկական լեռնաշխարհին հյուսիս-արեւելքից սահմանակից այս երկրամասը դեռ մատենագրական վաղ շրջանից արդեն իր շուրջ ձեւավորել է յուրատեսակ հետաքրքիր միջավայր, որը պայմանավորված է մի շարք գործոններով եւ կարեւոր հանգամանքներով։ Նախ Աղվանք երկրի աշխարհագրական սահմաններն են անընդհատ ենթարկվել փոփոխությունների, որի պատճառով մինչ օրս ընթանում են բուռն բանավեճեր այս երկրամասի հստակ եւ իրական սահմանների վերաբերյալ։ Այնուհետեւ, քանի որ միատարր չի եղել Աղվանքի ժողովրդագրական (էթնիկ) բնակչությունը, միշտ խնդիրներ են առաջացել, եւ գիտական շրջանակներում էլ բազմաբնույթ քննարկումների առարկա է դարձել Աղվանքի բնակչության կազմը։ Սակայն, եթե պատմական հիշատակությունների եւ Աղվանքի հետագա պատմության մասին վավերագրերի համակողմանի եւ ամբողջական վերլուծությունը փոքրիշատե լույս է սփռում նշված կնճռոտ հարցերի վրա, ապա նույնը չենք կարող ասել խորհրդային տարիներին օրակարգ մտած եւ այսօր էլ գիտական լայն շրջանակները փոթորկող ադրբեջանական գործոնի մասին։ Միայն անցյալ դարի սկզբին հայտնի պայմաններում պետականություն ձեռք բերած եւ խորհրդային իշխանությունների շնորհիվ ազգ հորջորջված կովկասյան թաթարների ինքնության փնտրտուքների հիմնական թիրախը հենց Աղվանքն է դարձել, որի պատմությունը սեփական ինքնահաստատման համար գործածած ադրբեջանական կեղծ գիտական շրջանակներն ամեն ինչ արել եւ այսօր էլ անում են այն աղավաղելու, աղճատելու եւ իրենց մտացածին պատմությունն ստեղծելու համար։ Ադրբեջանական բարբաջանքների արդյունքում ոչ միայն Աղվանքն է «սեփականացվել», այլեւ Կուր գետի աջափնյա հատվածը համարվող Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք նահանգներն են հռչակվել աղվանական՝ այս տա-*

*րածքների բազմադարյա մշակութային ժառանգության սեփականացման մոլուցքով։ Արդյունքում ադրբեջանական կեղծ գիտությունն Աղվանքը եւ աղվանականը ներկայացնում է որպես ադրբեջանական՝ յուրացնելով այս տարածաշրջանի ժողովուրդների՝ հատկապես հայերի հոգեւոր-մշակութային հարուստ ժառանգությունը։ Ձեղծարարները հասել են նույնիսկ նրան, որ Ուտիքի, Արցախի եւ Սյունիքի հարուստ մշակույթը եւ կրոնական ժառանգությունը ներկայացնում են որպես աղվանական, իսկ պատմական այնպիսի հզոր դեմքերի, ինչպիսիք են Մովսես Կաղանկատվացին, Մխիթար Գոշը կամ Կիրակոս Գանձակեցին, ներկայացնում են, ոչ ավել, ոչ պակաս, իբրեւ աղվանական հեղինակների[1]։ Ցավոք, սա դարձել է մեր արեւելյան հարեւանների պետական քաղաքականության անբաժան մասը, եւ այսօր լայնորեն կիրառում է ադրբեջանաթուրքական քարոզչամեքենան։ Ի տարբերություն ադրբեջանական կեղծարարության՝ հայ իրականության մեջ Աղվանքի պատմությունն ուսումնասիրվել եւ ուսումնասիրվում է անաչառության դիրքերից, որի վկայությունն է տարբեր հեղինակների՝ տարբեր ժամանակահատվածներում հրատարակած գիտական հարուստ գրականությունը։ Փաստացի այնպես է ստացվել, որ Հայոց պատմության կարեւոր հատվածներից մեկի ուսումնասիրությունը ոչ միայն գիտական ահռելի հետաքրքրություն է առաջացնում, այլ դարձել է ժամանակակից տարածաշրջանային քաղաքականության մաս՝ դրանից բխող լուրջ հետեւանքներով։*

*Այսպիսով՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հրատարակչությունն ընթերցողի դատին է հանձնում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Սվազյանի «Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները սկզբնավորումից մինչեւ 8-րդ դարը ներառյալ» մենագրությունը, որը վերաբերում է դարեր շարունակ (մինչեւ ԺԹ. դարի սկիզբ) Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցու մասը կազմած Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոսության պատմության վաղ շրջանին[2]։ Անշուշտ, այս աշ-*

---

[1] *Մի քանի տարի առաջ Մինսկում՝ բավականին ներկայացուցչական գիտաժողովի շրջանակներում, անձամբ եմ հանդիպել մի քանի ադրբեջանցի վայ-հեղինակների, որոնք ամենայն լրջությամբ զեկույց էին ներկայացնում «Ադրբեջանի նախախալամական հավատալիքների» կամ այսօր Ադրբեջանում գործող «Աղվանական առաքելական ուղղափառ եկեղեցու» մասին։*

[2] *Տե՛ս Հ. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները սկզբնավորումից մինչև 8-րդ դարը ներառյալ, խմբագիր՝ Վ. Վարդանյան, Սբ. Էջմիածին, 2019, 342 էջ (սույն հրատարակությունից մեջբերումների էջերը կտրվեն շարադրանքում՝ փակագծի մեջ)։*

*խատության գիտագործնական նշանակությունը մեծ է, սակայն հաշվի առնելով նաեւ թեմայի յուրահատուկ լինելը՝ պետք է առանձնահատուկ շեշտենք նրա քաղաքական նշանակությունը։ Ստվարածավալ այս աշխատությունը գալիս է համալրելու ադրբեջանական կեղծարարության դեմ պայքարի գիտական աշխատությունների ցանկը եւ մեկ անգամ եւս փաստելու այն հանրահայտ ճշմարտությունը, որ Բուն Աղվանքը եւ Կուր գետից աջ ընկած հայկական նահանգները (Հայոց Աղվանքը) տարբեր տարածաշրջաններ են, որոնք Ե. դարում իրանական տերության վարչաքաղաքական բաժանումների արդյունքում դարձել են Աղվանից մարզպանության միասնական տարածք, որում ժողովրդագրական գլխավոր եւ ամենակարեւոր տարր են եղել հայերը, իսկ ստեղծված հոգեւոր-մշակութային ժառանգությունը հայոց պատմական ժառանգության անբաժան մասն է։ Իհարկե հեղինակը հիմնական շեշտը դրել է Աղվանից Եկեղեցու կազմավորման, Աղվանքում քրիստոնեության տարածման եւ հայ-աղվանական եկեղեցական բազմաբնույթ հարաբերությունների լուսաբանման վրա, սակայն ակնհայտ է, որ Աղվանական Եկեղեցի հասկացությունը հիմնականում տարածաշրջանային նշանակություն ունի, իսկ նրա հետեւորդներն ու անդամները հիմնականում հայերն էին եւ նաեւ Աղվանից աշխարհի այն ժողովուրդները, որոնք ընդհանուր քրիստոնեական մշակույթի ձեւավորման եւ զարգացման արդյունքում ոչ միայն դարձել են Հայոց Եկեղեցու հետեւորդը, այլ նաեւ տարրալուծվել են հայ ժողովրդի մեջ՝ դառնալով նրա մի մասնիկը։*

*Մենագրության սկզբում հեղինակը նշում է. «Այն գրված է հայկական սկզբնաղբյուրների, եկեղեցական ավանդական պատմությունների, վիմական արձանագրությունների, բարձրաստիճան կրոնական գործիչների գրոց թղթերի եւ ասորական ու վրացական աղբյուրների հիման վրա՝ թեմային առնչվող պատմագիտական գրականության լայն օգտագործմամբ» (էջ 10)։ Եւ իրավամբ, աշխատության բովանդակությունը եւ թեմատիկ ընդգրկվածությունը հուշում են բազմազան եւ բազմաբնույթ աղբյուրների տեղին եւ նպատակային օգտագործումը, որը մենագրությունը դարձրել է արժեքավոր եւ ամբողջական։ Հեղինակը նպատակ է ունեցել հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները ներկայացնել Աղվանքի տարբեր ժամանակահատվածների վարչաքաղաքական կազմավորումների շրջանակներում, որով էլ պայմանավորված է մենագրության տարբեր մասերի, հատվածների եւ ենթագլուխների բովանդակությունը։ Մենագ-*

*րության աչքի զարնող առանձնահատկություններից է կառուցվածքային բաժանման բազմազանությունը՝ բաժին, մաս, գլուխ, ենթագլուխ, ինչն անշուշտ պայմանավորված է հեղինակի հետեւողականությամբ՝ հետազոտական նյութն ուսումնասիրել իր ամբողջության մեջ՝ ներառելով հիմնահարցերի եւ խնդիրների ողջ շրջանակը եւ դրան առնչվող բազմազան տեսակետներն ու մոտեցումները։ Ինչպես հեղինակն է նշում, «...հետազոտվող նյութը տրված է իր խնդիրներով հանդերձ, առանձին հարցերին առնչվող տեսակետների քննությամբ, դրանցում իրականն ու անիրականը բացահայտելու մղումով։ Ճշգրտվել, հաստատվել կամ հերքվել են մի շարք դրույթներ, պարզաբանվել են մշուշապատ եւ մութ մնացած հարցեր, ու որոշվել է խնդրո առարկա եկեղեցիներից յուրաքանչյուրի տեղն ու դերը ուսումնասիրվող ժամանակաշրջանում» (էջ 14)։ Այս մեթոդաբանությամբ էլ մենագրությունը հիմնականում բաժանվում է հետեւյալ բաժինների՝ «Մեծ Հայքի եւ Բուն Աղվանքի հոգեւոր կապերը» մ. թ. Բ. դարից մինչեւ Ե. դարի կեսերը, այնուհետեւ՝ նույն կապերը Ե. դարի կեսերից մինչեւ Զ. դարի վերջ, եւ վերջում՝ նշված ժամանակաշրջանից մինչեւ Ը. դարը ներառյալ։ Այս բաժանումը բնականաբար հիմնավորված է եւ մենագրության արժանիքների շարքում կարեւոր տեղ է զբաղեցնում։*

*Մինչ մենագրության հիմնական բաժիններին անցնելը՝ վաստակաշատ գիտնականը նախ մանրամասնորեն անդրադառնում է խնդրո առարկայի վերաբերյալ սկզբնաղբյուրներին եւ պատմագիտական ուսումնասիրություններին։ Սա մի յուրահատուկ գրականության տեսություն է, որում հեղինակը մանրակրկտորեն ներկայացնում է հայկական սկզբնաղբյուրները եւ դրանցում խնդրո առարկայի վերաբերյալ նույնիսկ չնչին, բայց կարեւոր տեղեկությունները։ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Կորյունի, Եղիշեի, Ղարար Փարպեցու, Հովհաննես Դրասխանակերտցու եւ այլոց երկերի հիշատակությամբ հեղինակը ներկայացնում է բազմաբղեթ տեղեկություններ Աղվանից աշխարհում քրիստոնեության տարածման վերաբերյալ՝ իհարկե իրավացիորեն հատուկ շեշտելով, որ առանձնահատուկ կարեւորություն է ներկայացնում Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը (որի երրորդ գրքի հեղինակությունը վերագրվում է Հովհաննես Դասխուրանցուն)։ Այնուհետեւ, արժանահիշատակ հեղինակներից անդրադարձ է կատարվում Ուխտանեսին, Մխիթար Գոշին, Ստեփանոս Օրբելյանին, Կիրակոս Գանձակեցուն, Մխիթար Այրիվանեցուն։ Հեղինակն*

*ուսումնասիրության համար բավականին հարուստ նյութ է վերցրել նաեւ «Գիրք թղթոց»-ից եւ «Կանոնագիրք Հայոց»-ից, իսկ օտարալեզու սակավաթիվ աղբյուրներից հիշատակում է անանուն հայ քաղկեդոնական հեղինակի* «Narratio de rebus Armeniae» *աշխատությունը եւ ասորական ու վրացական մի քանի հեղինակների երկեր (էջ 15–29)։ Անշուշտ, այս ամենը Հ. Սվազյանն անում է բաց եւ թափանցիկ աշխատանք ներկայացնելու նպատակով, որովհետեւ պատմագիտական արժեքավոր ուսումնասիրություն կատարելու լավագույն տարբերակը փաստերով հիմնավորված եւ ապացուցելի գիտելիքների շարադրանքն է, որը լույս է սփռում հիմնախնդիրների լուսաբանման վրա եւ կեղծարարության թիվ մեկ հակառակորդն է։*

*Նույն ոգով էլ անդրադարձ է կատարվում թեմայի ուսումնասիրվածությանը պատմագիտական գրականության մեջ[3]։ Հեղինակը հիշատակության արժանի աշխատանքներից է համարում Սիմեոն Երեւանցու «Ջամբռը», Մաղաքիա արք. Օրմանյանի «Հայոց Եկեղեցին» եւ «Ազգապատումը»[4], ինչպես նաեւ Մակար եպս. Բարխուդարյանցի, Ներսես Հ. Ակինյանի, Ս. Երեմյանի, Բ. Ուլուբաբյանի, Ա. Հակոբյանի, Մ. Բալայանի եւ այլոց արժեքավոր եւ մեծ հետաքրքրություն ներկայացնող աշխատությունները (էջ 30–42)։ Այս հեղինակների աշխատությունների քննությամբ Հ. Սվազյանը վեր է հանում նաեւ իր համար անընդունելի մի քանի կարեւոր փաստարկ, որոնք քննադատության ենթարկելով՝ առաջարկում է նաեւ համարժեք լուծումներ։ Օրինակ՝ անհամաձայնություն է հայտնում Մակար եպս. Բարխուդարյանցին այն հարցում, որ նա չի տարբերակել Բուն Աղվանքը եւ Հայոց Արեւելից կողմերը (էջ 33)։ Միաժամանակ, Հ. Սվազյանը բավականին դրականորեն է արտահայտվում Մ. Բալայանի «Հայ Աղվանից Եկեղեցին սկզբնավորումից մինչեւ մեր օրերը» աշխատության եւ դրանում արտահայտված եզրահանգումների եւ տեսակետների վերաբերյալ։ Սակայն, մեր կարծիքով, բավականին խնդրահարույց է Մ. Բալայանի աշխատության վերնագիրը, որովհետեւ խոսել Հայ Աղվանից Եկեղեցու մասին մինչեւ «մեր օրերը»՝ առնվազն անհասկանալի է,*

---

[3] *Այստեղ պետք է մեր անհամաձայնությունը հայտնենք «պատմագիտական» եզրի կիրառությանը, որովհետեւ քննարկվող գրականության մի մասը նաեւ կրոնագիտական, եկեղեցագիտական եւ աստվածաբանական բնույթ ունի։*

[4] *Ի դեպ, հարկ է նշել, որ հավանաբար թյուրիմացորեն Մաղաքիա արք. Օրմանյանի «Ազգապատում» կոթողային աշխատությունը ներկայացված է «քառահատոր», չնայած որ այն իրականում եռահատոր է (էջ 32)։*

*երբ Աղվանից կաթողիկոսությունը վերացել է ԺԹ. դարի սկզբին, եւ Հայ Աղվանից Եկեղեցի այսօր գոյություն չունի։*

*Հատկապես հատուկ ուշադրության է արժանի ռուս եւ ադրբեջանցի հեղինակների (Տրեւեր, Գեյուշեւ, Մամեդովա եւ այլք) երկերի եւ դրանցում տեղ գտած ընդունելի եւ մերժելի տեսակետների քննական վերլուծությունը (էջ 44—46), որն առավել ամբողջական է դարձնում մենագրության համար ելակետ հանդիսացող անաչառ եւ անկողմնակալ մոտեցումների հրամայականը։ Արդյունքում՝ մենագրության այս հատվածում եւ հետագա մյուս բաժիններում հեղինակը ոչ միայն արժեւորում, գնահատում ու շարադրում է Աղվանից աշխարհի եւ հատկապես հայ-աղվանական եկեղեցական առնչությունների իրական եւ արժանահավատ պատմությունը, այլեւ անընդհատ քննադատում եւ մերժողական դիրքորոշում է ցուցաբերում ադրբեջանական պատմագրության շարադրած կեղծիքներին։ Հատկապես ուշագրավ է Ֆ. Մամեդովայի անհեթեթության հասնող, բայց ադրբեջանական պատմագրության մեջ հետեւողականորեն կիրառվող մոտեցումների եւ եզրակացությունների քննադատությունը (էջ 47—49), տեսակետներ, որոնք՝ «...ունայն են, կանխակալ, միտված են ծառայելու «Ադրբեջան» անունով հանրապետության ծավալապաշտական քաղաքականությանը եւ եթե կարող են հագուրդ տալ իր եւ իր նմանների ազգայնամոլական ձգտումներին, բայց երբեք տեղ չգտնել իսկական գիտության մեջ եւ այն իրապես գնահատողների մոտ» (էջ 49)։*

*Մենագրության առաջին բաժինն ընդգրկում է բավականին երկարատեւ ու իրադարձություններով հարուստ մի ժամանակաշրջան, Մեծ Հայքի եւ Բուն Աղվանքի եկեղեցական հարաբերություններն Աղվանքում՝ քրիստոնեության տարածումից մինչեւ Ե. դար։ Սկզբնաղբյուրների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս հեղինակին ամենայն մանրամասնությամբ ներկայացնելու Աղվանքի առաքյալը համարվող Սբ. Եղիշայի քարոզչական գործունեությունը փաստարկված ձեւով տեղորոշելու եւ ճշգրտելու այն տարածքներն ու բնակավայրերը, որոնցում քարոզել, համայնք հիմնել եւ նահատակվել է Սբ. Եղիշան։ Այդպիսով՝ Հ. Սվազյանը ճշգրտորեն գծագրում է առաքյալի անցած ուղին, հստակեցնում Սահառն, Գիս, Զող եւ այլ վայրերի տեղադրության հարցը եւ որոշակիացնում այն աշխարհագրական միջավայրի սահմանները, որոնցում քարոզել է Սբ. Եղիշան։ Այնուհետեւ, փաստական հարուստ նյութի եւ տարբեր հեղինակների տարամետ կարծիքների համադրու-*

*թյամբ ու վերլուծությամբ հեղինակն «առանց երկմտելու» արձանագրում է. «Ս. Եղիշան 2-րդ դարի սկզբների եկեղեցական գործիչ էր եւ իր առաքելական գործունեությունը Զողում, Բուն Աղվանքում եւ Հայոց Արեւելից կողմերում ծավալել է ոչ շուտ, քան հիշյալ դարի սկզբներին եւ դարձել այդ երկրների առաջին լուսավորիչը» (էջ 72)։ Այսպիսի եզրահանգման հիմնական ելակետը հեղինակի համար Հայոց Սանատրուկ արքայի գահակալության տարիներն են եւ Սբ. Թադեոս առաքյալի նահատակությունը, որից հեղինակը բխեցնում է, որ Սբ. Եղիշան կարող էր Սբ. Թադեոս առաքյալի հետ գալ եւ այնուհետեւ Երուսաղեմ վերադառնալ, այնտեղ Սբ. Հակոբոս Տյառնեղբոր կողմից եպիսկոպոս ձեռնադրվել եւ նորից գալ Արեւելք ոչ թե Ա. դարի կեսերին, ինչը հիմնականում ընդունում է հետազոտողների մեծ մասը, այլ առնվազն Բ. դարի սկզբին։ Սակայն այստեղ հեղինակը, թերեւս, հաշվի չի առել մեկ կարեւոր հանգամանք՝ Սբ. Հակոբոս Տյառնեղբոր նահատակության ժամանակահատվածը (մոտ 62 թ.), ինչը, անշուշտ, հուշում է, որ Սբ. Եղիշան պետք է ավելի վաղ ձեռնադրված լիներ եպիսկոպոս, որին արդեն նախորդել էր Սբ. Թադեոսի նահատակությունը։ Ուստի չենք կարող համաձայնել հեղինակի այն պնդման հետ, որ Սբ. Եղիշան Բ. դարի սկզբին է գործել։ Միաժամանակ պետք է նշենք նաեւ այն կարեւոր հանգամանքը, որ Հ. Սվազյանը, այնուամենայնիվ, կարողացել է ամբողջացնել եւ ի մի բերել Սբ. Եղիշայի եւ այլ քարոզիչների (Խաս, Դադիում) վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը եւ մերժել ադրբեջանական պատմագրության մեջ նրանց գործունեությանը վերաբերող հակագիտական որոշ թեզեր։*

*Մենագրության առաջին բաժնի հաջորդ կարեւոր հատվածը Հայոց Եկեղեցու պատմության եւս մեկ կարեւոր շրջափուլի՝ Սբ. Գրիգորիսի քարոզչական գործունեության քննական վերլուծությունն է։ Այս շրջանը հեղինակը լուսավորչական շրջան կամ քրիստոնեության՝ Աղվանք ներթափանցման նոր շրջան է անվանում, ինչը պահպանում է դեպքերի հաջորդական շղթան։ Սբ. Գրիգորիսը Հայոց Եկեղեցու վաղ շրջանի ամենահայտնի սրբերից է, Սբ. Գրիգոր Լուսավորչի թոռը, Հայոց Արեւելից կողմերում եւ Աղվանքում քարոզչական կարեւորագույն առաքելություն իրականացրած եւ նահատակված հայտնի պատմական դեմքերից մեկը, որի կյանքը, գործունեությունը եւ մարտիրոսական մահը Հ. Սվազյանը ներկայացնում է առանձնահատուկ ակնածանքով եւ հետեւողականությամբ։ Անշուշտ սա պատահական չէ, քանի որ Սբ. Գրիգորիսի քարոզ-*

*չական գործունեությունը Հայոց Արեւելից կողմերում եւ Բուն Աղվանքում կարեւոր այն կովաններից մեկն է, որն ապացուցում է Մեծ Հայքի եւ ընդհանրապես հայ իրականության տնտեսաքաղաքական հսկա ազդեցությունն Աղվանքի վրա եւ հոգեւոր-մշակութային ընդհանրությունն այս երկրամասի հետ։ Հատկապես դա պետք է արձանագրենք մեր արեւելյան հարեւանների «հակափաստարկների» դեմ, քանի որ Աղվանքի պատմության խեղաթյուրումների շարքում ադրբեջանական կեղծ պատմագրությունը հնարավորինս փորձում է նվազեցնել հայկական գործոնը եւ հայկական կրոնամշակութային ազդեցությունը՝ անհարկի մեծացնելով աղվանական ինքնուրույնությունը եւ անկախությունը։ Հ. Սվազյանն իրավացի է, երբ մեծ ուշադրություն է դարձնում Մովսես Կաղանկատվացու այն հիշատակությանը, որ «Խնդրեցաւ յԱղուանից Մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իւրեանց» եւ փաստում, որ «Մանուկ Գրիգորիսին իրենց «կաթողիկոս» խնդրելով՝ աղվանները միաժամանակ հայերի հետ նաեւ ուխտ ու պայման են կապում հետագայում եւս իրենց հոգեւոր առաջնորդներին Հայաստանում՝ հայ կաթողիկոսների ձեռքով ձեռնադրելու մասին» (էջ 84)։ Այսինքն՝ հենց Սբ. Գրիգորիսի լուսավորչական առաքելությամբ եւ նահատակությամբ են ամրագրվել հայ-աղվանական եկեղեցական սերտ հարաբերությունները, որոնք հարյուրամյակների ընթացքում, եթե նույնիսկ երբեմն երերացել են, ապա շարունակել են մնալ սերտ եւ կայուն, քանի որ հիմքում, մեր կարծիքով, ոչ միայն կրոնական ընդհանրությունն էր եւ հոգեւոր-մշակութային սերտ կապը, այլեւ ժողովրդագրական-կրոնական ընդհանրությունը։ Այսպիսով՝ Աղվանքում քրիստոնեության տարածումը Հ. Սվազյանը ներկայացնում է երկու փուլով եւ երկու ուղղությամբ։ Առաջին փուլը, ըստ հեղինակի, սկսում է Բ. դարի սկզբից՝ Սբ. Եղիշայի գործունեությամբ եւ շարունակվում մինչեւ Դ. դարի սկիզբ, իսկ երկրորդ փուլը Սբ. Գրիգոր Լուսավորչի եւ Սբ. Գրիգորիսի գործունեության շրջանն է, որն ավարտվում է «առաքելական հավատի հիմնադրմամբ» Աղվանքում (էջ 90)։*

*Մենագրության առաջին բաժնի երրորդ գլուխը նվիրված է Սբ. Եղիշայի հաջորդների շրջանում քրիստոնեության տարածման հիմնահարցերի եւ ի վերջո Աղվանքում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու խնդրի լուսաբանմանը։ Այս դեպքում եւս, բազմազան սկզբնաղբյուրների, անվանացանկերի եւ ուսումնասիրությունների համադրմամբ եւ վերլուծությամբ, Հ. Սվազյանը հստակեցնում եւ վերջնական տեսքի*

*է բերում Սբ. Եղիշային հաջորդած առաջնորդների ցանկը՝ ցույց տալով, որ տարբեր մատենագիրների երկերում պահպանված անվանացանկերն իրականում մեկ ընդհանուր աղբյուր ունեն՝ մայր օրինակ, «...որը կազմվել է Մովսես Դասխուրանցու կողմից 10-րդ դարում» (էջ 96)։ Հատկապես արժեքավոր են Աղվանից Եկեղեցու վաղ շրջանի առաջնորդների գործունեության ժամանակագրական անդրադարձները եւ տարեթվերի հստակեցումը, որոնք հեղինակը կատարել է հիմնավորապես եւ համոզիչ՝ առաջարկելով. «Աղվանքի վաղքրիստոնեական շրջանի հոգեւոր առաջնորդների իրական շարքը» (էջ 102)։*

*Նույն հետեւողականությամբ էլ հեղինակը շարունակում է քրիստոնեությունն Աղվանքում պետական կրոն հռչակելու տարեթվի ճշգրտման խնդիրը։ Քննական վերլուծության են ենթարկվում Աղվանքի հասարակական-քաղաքական կարգը, Աղվանից Արշակունի արքայատոհմի հիմնումը, այս տարածաշրջանում քրիստոնեության տարածման եւ զարգացման առանձնահատկությունները, Ուռնայր արքայի՝ Աղվանքում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը։ Մանրամասնորեն ներկայացնելով Ուռնայրի գահակալության եւ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու վերաբերյալ ուսումնասիրողների տարամետ կարծիքներն ու պատմիչների տեղեկությունները՝ Հ. Սվազյանն առաջարկում է վերջնական տարբերակ. «...Աղվանից աշխարհի դարձն ի քրիստոնեություն տեղի է ունեցել Ուռնայր արքայի նախաձեռնությամբ՝ 4-րդ դարի 70-ական թվականների սկզբին, սակայն ոչ ուշ, քան 373 թ., երբ դեռ ողջ էր նրան օծող Ներսես Ա. Մեծը եւ Պապ թագավորը» (էջ 114)։*

*Մի ամբողջ գլուխ Հ. Սվազյանը նվիրել է քրիստոնեության պաշտոնականացումից հետո Աղվանից աշխարհի հոգեւոր-մշակութային զարթոնքին։ Քրիստոնեության ամրապնդումը, արդեն Ուռնայր արքայից սկսած, ուղեկցվում էր հեթանոսության հալածանքներով, եկեղեցաշինության զարգացմամբ եւ դպրոցների բացմամբ։ Առավել մեծ ուշադրություն է դարձվում աղվանական գրերի գյուտին։ Հեղինակն ամենայն մանրամասնությամբ անդրադարձ է կատարում հայ մատենագիրների հիշատակությանը՝ իրավացիորեն արձանագրելով, որ Հայոց աշխարհում «5-րդ դարի արշալույսին սկիզբ առած լուսավորչական շարժումն ընդգրկել էր նաեւ Աղվանքը» (էջ 120)։ Աղվանից գրերի ստեղծման պատմությունը եւս, ինչպես ամեն աղվանականը, բուռն վեճերի տեղիք է տվել եւ բազմաթիվ ուսումնասիրողներ կա՛մ մերժել են Մեսրոպ Մաշտոցի՝*

դրանց ստեղծելու հանրահայտ փաստը, կա՛մ էլ անհարկի նսեմացրել նրա դերակատարությունն այդ հարցում։ Այսպիսի հակագիտական եւ երբեմն ադրբեջանահաճո տեսակետների քննական վերլուծությունը եւ հիմանավոր մերժումը վստահաբար կարող ենք կոչել մենագրության այս հատվածի գլխավոր արժանիքը։ Հ. Սվազյանը բազմազան հիշատակությունների եւ փաստերի համադրությամբ, ինչպես նաեւ տարբեր ուսումնասիրությունների վերլուծությամբ մեկ անգամ եւս փաստում է. «Աղվանից գրերը ստեղծվել են Արեւմտյան Հայաստանում՝ Մեսրոպ Մաշտոցի հանճարով ու Բենիամին երեցի աշխատությամբ եւ նախատեսված էին աղվանացիների համար» (էջ 132), եւ որ՝ «Աղվանից գրերի ստեղծման գործընթացում պետք է տարբերակել երկու փուլ. 1-ին՝ արարման, որ տեղի ունեցավ Բյուզանդական Հայաստանում, եւ 2-րդ՝ մշակման ու կատարելագործման, որն իրականացվեց Բուն Աղվանքում» (էջ 133–134)։ Այս վերջին տեսակետը լույս է սփռում նաեւ աղվանական գրերի ստեղծման ժամանակաշրջանի վրա, եւ ինչպես հեղինակն է նշում, «...միանգամայն արդարացի կլինի խնդրո առարկա նշանագրերի գյուտի տարեթիվ համարել 421–422 թթ.» (էջ 135)։ Ուշագրավ են նաեւ Երուսաղեմում աղվանական եկեղեցիների կառուցման վերաբերյալ հիշատակությունները եւ դրանցում ակնհայտ հայկական հետքերի վերհանումը, որը գալիս է ամբողջացնելու հայ-աղվանական հոգեւոր մշակութային կապերը դեռ վաղ շրջանից, ինչի հետեւանքներից էր հայ ազգի երեւելիների անմիջական մասնակցությունը աղվանական գրերի ստեղծմանը, որոնց «...ջանադրության շնորհիվ Աղվանից աշխարհն արժանի կերպով իր տեղն է գտնում Մերձավոր Արեւելքի քրիստոնյա երկրների շարքում» (էջ 140)։

Մենագրության մեջ կարեւոր անդրադարձ է կատարվում Աղվանից Եկեղեցու ձեւավորման, կայացման պատմությանը եւ նվիրապետական կարգին։ Աղվանքի քրիստոնյա արքաների նվիրատվությամբ Աղվանից Եկեղեցին հզորանում եւ դառնում է տնտեսապես ապահովված կրոնական կառույց՝ սեփական եկամուտներով եւ վարչական համակարգով։ Վերջնական տեսքի է գալիս նվիրապետական կարգը, որին Հ. Սվազյանն անդրադառնում է մանրամասնորեն՝ հիմնվելով Մովսես Կաղանկատվացու, Ուխտանեսի եւ Ստեփանոս Օրբելյանի արժեքավոր հիշատակությունների վրա։ Այդ համատեքստում մեծ ուշադրություն է դարձվում նաեւ հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունների հիմնաքարը համարվող սկզբունքային շատ կարեւոր հարցի՝ Աղվանից Եկեղեցու

*առաջնորդների՝ Հայոց կաթողիկոսի կողմից ձեռնադրությանը։ Փաստվում է այն կարեւոր հանգամանքը, որ Սբ. Գրիգոր Լուսավորչից սկսած՝ Աղվանքի հոգեւոր առաջնորդների ձեռնադրությունը Հայոց կաթողիկոսի կարեւոր գործառույթներից էր, իսկ հայ-աղվանական դավանաբանական անխախտ միությունն անընդհատ թարմանում էր յուրաքանչյուր նոր առաջնորդի ձեռնադրությամբ։ Ինչպես հեղինակն է նշում, «Աղվանից Եկեղեցին, ի դեմս Գրիգոր Լուսավորչի, անդստին ունեցել է իր պատրիարքը եւ ենթարկվել միայն նրան» (էջ 145), ինչը, որպես ավանդություն, շարունակվել է նաեւ հաջորդների շրջանում, որի վկայությունն է հետագա դարերում Հայոց կաթողիկոսների՝ Աղվանից Եկեղեցու առաջնորդի ձեռնադրությունը։ Աղվանից Եկեղեցին ունեցել է նվիրապետական հստակ աստիճանակարգություն, որի մանրամասն քննությունը եւս կարեւոր տեղ է զբաղեցնում մենագրությունում։ Եւ պատահական չէ, որ հետազոտության բավականին հագեցած եւ հարուստ այս հատվածի վերջում հեղինակն իր աշխատանքի արդյունքներն ամփոփում է հետեւյալ կարեւոր եզրահանգման մեջ. «Այսպիսով, Աղվանից Եկեղեցին իր ծագմամբ ու բնույթով, կառուցվածքով ու ծիսակարգով հար եւ նման էր Հայ Առաքելական Եկեղեցուն եւ միանգամայն լիարժեք հոգեւոր մարմին էր։ Լինելով ինքնագլուխ, սեփական հոգեւոր իշխանությամբ օժտված հաստատություն՝ Աղվանից Եկեղեցին, սակայն, կրում էր Հայոց Եկեղեցու ազդեցությունը եւ ըստ էության հանդիսանում նրա նվիրապետական կառույցներից մեկը» (էջ 161)։*

*Մենագրության երկրորդ բաժինը վերաբերում է հայ-աղվանական եկեղեցական փոխհարաբերություններին Ե. դարի կեսից մինչեւ Ը. դար։ Այս բաժինն իր գիտագործնականն նշանակությամբ բնավ չի զիջում նախորդին եւ մի շարք կարեւոր հիմնահարցերի ամբողջական եւ լիարժեք վերլուծություն է պարունակում։ Այս առումով կարելի է առանձնացնել մի քանի կարեւոր հարց, որ լավագույնս են լուսաբանված եւ մեծ կարեւորություն են ձեռք բերում Աղվանից աշխարհի այս ժամանակահատվածի իրական պատմության շարադրման համատեքստում։ Առաջին կարեւոր խնդիրը, որը լուսաբանված է հետաքրքիր դիտարկումներով եւ եզրահանգումներով, Հայոց պատմության կարեւորագույն ժամանակահատվածում՝ Ե. դարի կեսերին, Վաչե Բ. արքայի գահակալության շրջանն է։ Աղվանքի ամենահայտնի արքաներից մեկը՝ «...իր նախորդների նման, հանդես էր գալիս իբրեւ ջերմեռանդ քրիստոնյա եւ ամեն կերպ*

*նպաստում էր նոր հավատի խորացմանն ու շատերին դավանափոխ անելով, ստվարացնում հավատացյալների շարքերը» (էջ 162)։ Աղվանքում եւս քրիստոնեությունն այն աստիճանի խոր արմատներ էր ձգել, որ Հազկերտ Բ.-ի քրիստոնեահալած քաղաքականությունն ընդգրկում է ոչ միայն Հայոց մարզպանությունը, այլեւ Վիրքն ու Աղվանքը։ Պարսից արքունիքի համար հավասարապես թիրախ էին երեք երկրները միասին, ինչը լավագույն ապացույցն է այս երկրների կրոնական միասնության։ Հ. Սվազյանը փաստում է, որ նույնիսկ հստակ ու ուղղակի հիշատակությունների բացակայության պայմաններում պետք է արձանագրենք, որ Տիզբոն կանչված եւ առերես զրադաշտականություն ընդունած հայոց եւ վրաց մեծամեծների կողքին անպայման եղել է նաեւ Աղվանից աշխարհի պատվիրակությունը՝ արքայի գլխավորությամբ։ Աղվանքում էլ առերես ուրացությանը հաջորդում են պարսից մոգերի բռնություններն ու ճնշումները, նոր ատրուշանների կառուցումը կամ եկեղեցիների վերածումը ատրուշանների[5], արտաքսումները եւ գաղթը։ Օրհասական այս օրերին աղվանից մեծամեծներն օգնության խնդրանքով դիմում են հայերին եւ հազարապետի ու եպիսկոպոսապետի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկում Հայաստան։ Հ. Սվազյանն այստեղ եւս մեկ կարեւոր դիտարկում է անում. քանի որ այս կարեւոր առաքելությունը չի իրականացնում Վաչե արքան, ապա «Նրա բացակայությունը գալիս է հաստատելու.... այն ենթադրությունը, որ նա եւս իբրեւ պատանդ պահվել է պարսից արքունիքում եւ նկարագրվող դեպքերի ժամանակ շարունակում էր մնալ այնտեղ» (էջ 169)։ Այս եւ նմանատիպ համարձակ ենթադրություններն ու եզրահանգումները, ինչ խոսք, նորովի են ներկայացնում Աղվանից պատմության որոշ դրվագներ եւ գալիս են լրացնելու Հայոց պատմության այս ժամանակահատվածի հակասական եւ իրարամերժ կարծիքների մերժողական մոտեցումները։ Հեղինակն այնուհետեւ ներկայացնում է Վարդանանց պատերազմին հաջորդած դեպքերն ու իրադարձությունները՝ փաստելով, որ Աղվանքում զրադաշտականության դեմ պայքարը Վաչե Բ.-ն շարունակեց նաեւ Հազկերտին հաջորդած Պերոզի օրոք, որն ի վերջո ավարտվեց քրիստոնեության հաղթանակով եւ պարսից արքունիքի վարած քաղաքականության մեղմացմամբ։*

---

[5] *Մենագրությունը, ցավոք, զերծ չէ որոշ թերություններից, որից մեկն էլ այս հատվածում ատրուշանի փոխարեն բնագիր սպրդած «մզկիթ» եզրն է, որն ուղղակի անհամատեղելի է զրադաշտականության հետ (էջ 168)։*

*Հաջորդ կարեւոր հարցը, որը քննվում է մենագրության երկրորդ բաժնում, Աղվանքի վերածումն է մարզպանության։ Կարեւորությամբ եւ բազմակի նշանակությամբ սա ամենախնդրահարույց հարցն է, որովհետեւ Մեծ Հայքի վարչական բաժանումն էապես տուժեց հենց այս շրջանում, երբ իրանական վարչաքաղաքական նոր բաժանման շնորհիվ Փայտակարան նահանգը միացվեց Ատրպատականին, իսկ Արցախն ու Ուտիքը միացան Աղվանից մարզպանությանը՝ հետագայում դառնալով նրա պատմության անբաժան մասը։ Այս իրադարձությունների հետեւանքն են նաեւ Մեծ Հայքի արեւելյան նահանգներն Աղվանք կոչելը եւ այսօրվա ադրբեջանական քարոզչամեքենայի՝ ամեն հայկականը յուրացնելու եւ աղվանական ներկայացնելու քաղաքականությունը։ Ինչպես հեղինակն է իրավացիորեն նշում. «Վարչաքաղաքական այս բարեփոխումները կամ փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողնում նաեւ հոգեւոր կյանքի վրա։ Մարզպանության տարածքային ընդլայնմամբ ընդարձակվում են նաեւ Աղվանից Եկեղեցու իրավասության սահմանները» (էջ 177)։ Նոր վարչական սահմաններում գտնվող բոլոր թեմերը միավորվում են եւ հանդես գալիս մեկ ընդհանուր՝ «Աղվանից Եկեղեցի» անվամբ, եւ իրավացի է հեղինակը, երբ գործածում է նոր հասկացություն՝ «Աղվանից ընդհանրական Եկեղեցի» (էջ 178)։*

*Ե. դարավերջի Աղվանքի պատմությունը մեկ անգամ եւս փաստում է հայ-աղվանական հասարակական-քաղաքական եւ հոգեւոր-մշակութային սերտ կապերը։ Հայոց մարզպանությունում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններն անմիջապես արձագանք են գտնում Աղվանից մարզպանությունում, եւ Վահան Մամիկոնյանի գլխավորած ազատագրական շարժմանը զուգահեռ՝ Աղվանքում հեռացվում է պարսիկ մարզպանը, եւ մարզի կառավարումը հանձնվում է Վաչագան Գ. Բարեպաշտին։ Աղվանից նոր տիրակալին նվիրված՝ մենագրության այս ծավալուն հատվածը ներառում է տարբեր հեղինակների հետազոտությունների քննական վերլուծություն եւ որոշ տեսակետների ու մոտեցումների վերանայում։ Մանրամասնորեն ներկայացվում են Վաչագան Բարեպաշտի եւ Աղվանից Եկեղեցու եպիսկոպոսապետ Շուփհաղիշոյի հայրենանվեր եւ եկեղեցաշեն գործունեությունը, Ուտիքի Աղվեն գավառում հրավիրված ժողովը եւ դրանում ընդունված ու «Կանոնագիրք Հայոց»-ում ներառված Վաչագան արքայի կանոնները եւ այլն։*

*Հաջորդ կարեւոր խնդիրը, որն առանձին քննության առարկա է դարձել, Հայոց եւ Աղվանից Եկեղեցիների միասնական դիրքորոշումն*

*է քաղկեդոնականության հանդեպ եւ Քաղկեդոնի ժողովի որոշումների մերժումը Դվինի Զ. դարի երկու ժողովներում։ Հեղինակին այս դեպքում եւս հաջողվել է սկզբնաղբյուրների եւ տարբեր հեղինակների բազմազան հետազոտությունների քննական վերլուծությամբ փաստել հայ-աղվանական եկեղեցական միասնությունը դավանական խնդիրներում եւ Բյուզանդական Եկեղեցու դեմ միասնական պայքարը։ Եւ եթե Դվինի 506 թ. առաջին եւ 554 թ. երկրորդ ժողովների մասին, կարող ենք ասել, գրվել եւ ասվել է գրեթե ամեն ինչ, ապա Աղվանից Եկեղեցու մասնակցությունն այդ ժողովներին ոչ միշտ է ամբողջությամբ լուսաբանվել կամ քննարկվել։ Մենագրության հեղինակը հենց այս խնդրի լուծումն է իր առջեւ դրել եւ կարողացել է բազմազան սկզբնաղբյուրների համադրությամբ եւ վերլուծությամբ լույս սփռել հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունների այս ժամանակահատվածի վրա։ Մասնավորապես հեղինակը հիմնավոր ենթադրություն է անում, որ Դվինի Ա. ժողովին պետք է մասնակցություն ունենային Վաչագան Բարեպաշտը եւ Շուփհաղիշոն, ինչպես նաեւ Ուտիքի եւ Արցախի թեմերի ներկայացուցիչները, եւ հավանական համարում նրանց կողմից հայտնի «Թուղթ Հայոց ի Պարսս առ ուղղափառս» հավատո նամակի ստորագրությունը՝ ի թիվս հայոց մարզպանի եւ ժողովի այլ մասնակիցների։ Ըստ Հ. Սվազյանի՝ հայ-աղվանական եկեղեցական միասնականությունը քաղկեդոնականության դեմ պայքարում շարունակվում է նաեւ Դվինի Բ. ժողովից հետո, որը դրսեւորվում է նաեւ նեստորականության դեմ հետեւողական պայքարի տեսքով, չնայած որ Աղվանից Եկեղեցու՝ Դվինի Բ. ժողովին մասնակցության մասին ուղղակի վկայություններ չեն պահպանվել (էջ 191–203)։*

*Մենագրության երկրորդ բաժնում առանձին գլուխ նվիրված է Աղվանից Եկեղեցու կաթողիկոսական շրջանին՝ բաժանված չորս շրջանի՝ Զ. դարի երկրորդ կես, Է. դարի առաջին եւ երկրորդ կեսեր եւ Ը. դարի առաջին կես։*

*Զ. դարի երկրորդ կեսին Աղվանից Եկեղեցու առաջնորդներն սկսում են կրել «կաթողիկոս» տիտղոսը, որին առաջինն արժանանում է Աբաս եպիսկոպոսը։ Վկայակոչելով տարբեր սկզբնաղբյուրների՝ Հ. Սվազյանը վերջնականապես ճշգրտում է Աբասի գահակալության տարեթվերը (552–596 թթ.) եւ համամիտ չէ Եղնիկ արք. Պետրոսյանի այն պնդմանը, որ Աբասը կաթողիկոս է դարձել 571/572 թթ. (էջ 209–215)։ Խնդրահարույց են նաեւ Աբասի տիտղոսների կիրառության հարցերը, որովհետեւ*

*որոշ հեղինակների հիշատակություններում նա հիշվում է որպես «Աղվանից, Լփնաց եւ Զորա կաթողիկոս», իսկ որոշ դեպքերում էլ ուղղակի հիշատակվում է՝ «Պարտավի եպիսկոպոս»։ Այս տարբեր մոտեցումներից հեղինակն արժանահիշատակ է համարում Մաղաքիա արք. Օրմանյանի կարծիքը, ըստ որի՝ «Աղուանից կաթողիկոսները երկու անուններն ալ անխտիր կամ միասին կը գործածէին» (էջ 210)։ Աբասի կաթողիկոսության շրջանում քաղկեդոնականության եւ աղանդավորության դեմ պայքարի համատեքստում կարեւոր խնդիրներից մեկն էլ քաղկեդոնականությունն Աղվանից Եկեղեցու կողմից չմերժելն է, որի վերաբերյալ մանրամասների ամբողջական քննությամբ փաստվում է, որ խնդիրը լուծվում է Հովհաննես Բ. Գաբեղենացու ջանքերով, եւ Հայոց կաթողիկոսի զգաստացնող նամակները եւ պատվիրակների քարոզչական աշխույժ գործունեությունը մեծ ազդեցություն են թողնում Աբաս կաթողիկոսի վրա եւ ի վերջո ավարտվում Աղվանից Եկեղեցու հակաքաղկեդոնական դավանանքի ամրապնդումով։*

*Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունների եւ դավանական փորձությունների նոր հանգրվան է դառնում պարսից արքունիքի կրոնական քաղաքականության փոփոխությունը եւ հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների նոր փուլը Զ. դարի երկրորդ կեսին, որի մանրամասն քննությունը եւ ժամանակի կարեւոր իրադարձությունների շարադրանքը դարձել են առանձին՝ բավականին հաջողված ենթագլուխ։ Ինչպես եւ նախորդ գլուխներում, այս դեպքում եւս հեղինակի համար առաջնայինը պատմական փաստերի ճշգրիտ համադրումն ու շարադրանքն են։ Հայոց պատմության այս շրջափուլի հանրահայտ դեպքերի շարադրանքով հեղինակը քննարկում է նաեւ հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններին առնչվող հարցեր։ Մասնավորապես գտնում է, որ Զ. դարի վերջին՝ հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների սրման ժամանակահատվածում, Մովսես Բ. Եղիվարդեցին անսասան էր հակաքաղկեդոնական դիրքորոշման մեջ, Կ. Պոլիս մեկնած Հայոց Եկեղեցու պատվիրակության կազմում Աղվանից Եկեղեցու ներկայացուցիչների բացակայությունը հետեւանք է բյուզանդական կողմի այն մոտեցման, որ՝ «...կայսրը հաշվի առնելով Հայոց Եկեղեցու ազդեցությունը նրանց վրա, բավական է համարել հարցը լուծել հայերի հետ համաձայնության գալով եւ ավելորդ գտել Աղվանքից եւս ներկայացուցիչներ կանչել» (էջ 225)։ Ինչպես հայտնի է, բյուզանդական*

*կողմը, չկարողանալով քաղկեդոնական դավանանք պարտադրել հայերին, գնում է Եկեղեցին երկփեղկելու ճանապարհով, որի հետեւանքն է դառնում Ավանի հակաթոռ կաթողիկոսության հիմնումը։ Նոր իրողության պայմաններում, հեղինակի կարծիքով, ավելի է բարձրանում Աղվանից Եկեղեցու հեղինակությունը։ Դրանով է թերեւս բացատրվում այն, որ Սյունիքի հոգեւորականությունը, հաշվի առնելով Հայոց Եկեղեցու երկու կաթողիկոսների գոյության անհասկանալի իրավիճակը, որոշում է ձեռնադրությունն ու մյուռոնը Աղվանից կաթողիկոսությունից ստանալ։ Սակայն նույնիսկ ակնհայտ փաստերի արձանագրմամբ, երբ Սյունիքի որոշ եպիսկոպոսներ ձեռնադրվում են Աղվանից հովվապետի ձեռամբ, Հ. Սվազյանն իրավացիորեն փաստում է, որ այնուամենայնիվ, ինչպես հուշում են մատենագիրները, Աղվանից կաթողիկոսներն իրենց այդ իրավունքն իրացնելիս անպայման հաշվի էին նստում Հայոց կաթողիկոսի հետ եւ ստանում նրա համաձայնությունը։ Այնպես որ, նույնիսկ հարաբերական անկախության եւ ինքնուրույնության աճի պայմաններում, Աղվանից Եկեղեցին շարունակել է մնալ Հայոց Եկեղեցու ենթակա կառույց։*

*Այդ ամենը հաստատելու են գալիս նաեւ է. դարասկզբի իրադարձությունները, որոնց քննական վերլուծությունը դարձել է մենագրության եւս մեկ առանձին գլուխ։ Հայոց Եկեղեցու պատմության բավականին բարդ մի ժամանակահատված է սա, երբ Մովսես Բ. Եղիվարդեցի կաթողիկոսի մահվանից հետո մոտ երեք տարի կաթողիկոսական գահը թափուր էր, այնուհետեւ դժվարին ընտրությամբ Աբրահամ Ա. Աղբաթանեցին է ընտրվում կաթողիկոս եւ նույն ժամանակահատվածում Հայոց Եկեղեցուց անջատվում է Վրաց Եկեղեցին, իսկ Աղվանից Եկեղեցու հետ էլ հարաբերությունները հարթ չեն ընթանում։ Հ. Սվազյանն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է է. դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունները եւ հանրահայտ իրողությունների շարքում փորձում նաեւ հստակեցնել, ճշգրտել եւ ամբողջացնել Աղվանից Եկեղեցու մասնակցությունը եւ դերակատարությունը այդ իրադարձություններին։ Անդրադառնալով Ուխտանեսի այն հիշատակությանը, որ Դվինի 607 թ. ժողովին Աղվանից կաթողիկոսը չէր մասնակցում՝ մեծավաստակ գիտնականը նախ հստակեցնում է, որ Ուխտանեսի հիշատակած կաթողիկոսը պետք է լիներ Վիրոն, իսկ այնուհետեւ տալիս է նաեւ նրա բացակայության բուն պատճառը. «...ի պատասխան Սասանյան Իրանի կրոնահալած քաղաքականության, Աղվանքում բռնկվում է հակասասանյան մի*

*շարժում, որի գլուխ, իբրեւ գաղափարական առաջնորդ, կանգնած էր Վիրոն։ Ճնշելով ապստամբությունը՝ Խոսրով Բ. Փարվեզը դաժան հաշվեհարդար է տեսնում շարժման մասնակիցների հետ, իսկ նրանց ղեկավարներին, այդ թվում նաեւ Վիրոյին, դատապարտում է մահվան։ Բայց, շնորհիվ քրիստոնյա տիկնանց տիկին Շիրինի, մահապատիժը փոխարինվում է գերությամբ, եւ Վիրոն շուրջ քսանհինգ տարի՝ 604–628 թթ., որպես գերի մնում է Պարսկաստանում» (էջ 234–235)։ Միաժամանակ հեղինակը գտնում է, որ մատենագրական որոշ տվյալների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ Աղվանից Եկեղեցու պատվիրակություն Դվինի ժողովին, այնուամենայնիվ, մասնակցել է, որն «...իր ներդրումն է ունեցել ժողովի որոշումների ընդունման գործում» (էջ 235)։ Հիշյալ Դվինի ժողովը հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունների համապատկերում կարեւոր նշանակություն ունի, քանի որ նորընտիր կաթողիկոսի ջանքերով վերականգնվեց նաեւ Հայոց Եկեղեցու միասնությունը՝ Աղվանից եւ Սյունյաց աթոռներով հանդերձ։ Եւ եթե Վրաց Եկեղեցու դեպքում տեղի ունեցավ պառակտում, ապա Աղվանից կաթողիկոսությունը շարունակեց մնալ Հայոց Եկեղեցու անբաժան մասը։ Է. դարի առաջին կեսի մանրամասն քննությամբ Հ. Սվազյանը ոչ միայն լուսաբանում եւ խնդրահարույց հարցերի պատասխաններն է տալիս, այլ նաեւ նորովի մոտեցումներ է ցուցաբերում որոշակի հարցերի վերաբերյալ։ Մասնավորապես գտնում է, որ Սեբեոսի հիշատակությունը Տիզբոնի ժողովին Վիրոյի մասնակցության վերաբերյալ խնդրահարույց է, որովհետեւ «...պարսից արքունիքում արգելափակված Վիրոյին հազիվ թե ժողովին մասնակցելու հնարավորություն տրվեր» (էջ 242), կամ համարում է, որ պատմիչների վկայությունն այդ ժողովին Աղվանից կաթողիկոսի մասնակցության մասին արժանահավատ չէ, եւ «... պետք է կարծել, որ նրանց հիշատակած «կաթողիկոսը» ոչ թե երկրի գլխավոր հոգեւոր առաջնորդն էր, այլ Աղվանքի բարձրաստիճան հոգեւորականներից մեկը, ավելի շուտ, կաթողիկոսական տեղապահը...» (էջ 244)։*

*Մենագրության վերջին հատվածում ներկայացված են Աղվանից Եկեղեցու է. դարի եւ Ը. դարի առաջին կեսի պատմության հիմնախնդիրները եւ դրանց քննական, համակարգային վերլուծությունը։ Հ. Սվազյանն առաջնորդվում է Աղվանից կաթողիկոսական գավազանագրքով, ամենայն մանրամասնությամբ ներկայացնում տվյալ ժամանակահատվածի պատմությունը, քննության առարկա դարձնում թե՛ քաղաքական, թե՛ դավանա-*

*բանական խնդիրներ։ Մենագրության այս հատվածը բավականին ընդգրկուն է, իրադարձություններով հարուստ, Աղվանից մեծաքանակ կաթողիկոսների հիշատակությամբ (Վիրո, Զաքարիա, Հովհան, Ուխտանես, Եղիազար, Ներսես Բակուր, Սիմեոն, Միքայել, Անաստաս եւ այլք), հեղինակը չի սահմանափակվում հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունների լուսաբանմամբ, այստեղ տեղ են գտել նաեւ Աղվանից Եկեղեցու հարաբերությունները պարսից, այնուհետեւ արաբական տերությունների հետ, հարաբերությունները Բյուզանդական Եկեղեցու հետ (քաղկեդոնականության պարտադրանքով, օրինակ՝ քաղկեդոնական Ներսես Բակուր կաթողիկոսի շրջանում), քարոզչական բուռն գործունեությունը հոների շրջանում եւ այլն։ Վստահաբար կարող ենք ասել, որ տվյալ ժամանակահատվածի պատմությամբ հետաքրքրվողների համար իրավամբ արժեքավոր աշխատանքի հետ գործ ունենք, եւ շատերն իրենց հուզող բազմաբնույթ հարցերի պատասխանները կգտնեն այս ծավալուն մենագրությունում։ Հատկապես կարեւոր է ադրբեջանական կեղծարարության եւս մեկ հիմնադրույթի մերժում՝ կապված հայոց Եղիա Ա. Արճիշեցի կաթողիկոսի ձեռնարկումների եւ Պարտավի ժողովի ընդունած որոշումների հետ։ Հերթական անգամ հիմնավորապես մերժվում եւ ի ցույց են դրվում ադրբեջանական վայ-պատմագրության ակնհայտ կեղծ եւ սուտ պնդումները։*

*Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ ընթերցողի դատին է հանձնված մեծ կարեւորություն ներկայացնող մի աշխատություն, որը ոչ միայն հայագիտական հերթական կարեւոր ձեռքբերում է, այլեւ իր պատմագիտական նշանակությամբ հերթական մարտահրավերն է ադրբեջանական կեղծարարության։ Այդ ամենի համատեքստում էլ կարեւորում ենք նաեւ նմանատիպ աշխատությունների օտարալեզու թարգմանություններն ու հրատարակությունները, որոնց նշանակությունը չի սահմանափակվում միայն գիտության շահերով եւ ավելի հեռուն գնացող նպատակներ պետք է հետապնդի։*

ՊԱՐԳԵՒ ԲԱՐՍԵՂՅԱՆ
*Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ*